



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Թ Ի Վ 8

**ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝
2019 Թ. ԱՊՐԻԼԻ 17-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ**

Օրակարգում՝

1. Ավարտական աշխատանքների ընթացքը ամբիոններում:
2. Մանկավարժական պրակտիկայի ընթացքը դպրոցներում:
3. Մանկավարժի որակավորման ավարտական քննության նախապատրաստական աշխատանքները ֆակուլտետում:
4. Ընդհանուր լեզվաբանության ամբիոնի տարեկան հաշվետվությունը
5. Ընթացիկ քննությունների արդյունքների ամփոփում:
6. Ռեկտորատից ստացված գրությունների իրազեկում:
7. Ընթացիկ հարցեր:

Սկսելով գիտական խորհրդի նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը տեղեկացրեց, որ գիտխորհրդի 36 անդամներից նիստին մասնակցում է 28-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նա այնուհետև ընթերցեց նիստի օրակարգը, որը հաստատվեց միաձայն քվեարկությամբ:

Օրակարգի 1-ին՝ ամբիոններում ավարտական աշխատանքների ընթացքի **հարցի** մասին հաղորդումներով հանդես եկան բոլոր ամբիոնների վարիչները: Նրանց մեծ մասը (Ս.

Մուրադյան, Ս. Գրիգորյան, Ա. Ջրբաշյան, Ա. Աբաջյան) հայտնեց, որ ավարտական աշխատանքների ընթացքն ամբիոններում հիմնականում գոհացուցիչ է. շրջանավարտների հետ տեղի են ունենում պարբերական հանդիպումներ, չեն նկատվում ակնառու թերացումներ, և արդյունքները բավարար են: Շուտով կկայանան նախապաշտպանություններ, ու պատկերը կլինի ավելի հստակ: Ամբիոնների որոշ վարիչներ (Յու. Ավետիսյան, Վ. Պետրոսյան), սակայն, ունեին մտահոգություններ՝ կապված մի քանի շրջանավարտների ծուլության կամ անտարբերության հետ: Նրանց կարծիքով ավարտական աշխատանք գրող երկու-երեք ուսանողներ հավանաբար կգրկվեն պաշտպանության մասնակցությունից:

Հաջորդ հաղորդումները (համապատասխան ամբիոնների վարիչներ և դոց. Ա. Տեր-Մինասյան) նվիրված էին **օրակարգի 2-րդ**՝ դպրոցներում ընթացող մանկավարժական պրակտիկայի **հարցին**: Նկատվեց, որ մանկավարժական պրակտիկան դպրոցներում ընթանում է բնական հունով, դեկանատն ու ամբիոնները հետևում են դրա կանոնավոր անցկացմանը: Պրոֆ. Ս. Մուրադյանը, սակայն, հայտնեց այն մտահոգությունը, որ պրակտիկայի և դասերի համադրումը երբեմն առաջացնում է դժվարություններ, այն է՝ ստեղծվում է ժամանակի սղության խնդիր: Ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը խոստացավ մտածել այդ հարցի մասին, գրուցել ԵՊՀ-ի պրակտիկայի բաժնի հետ և գտնել դրան հարմար լուծում:

Օրակարգի 3-րդ հարցի առիթով (ֆակուլտետում մանկավարժի որակավորման ավարտական քննության նախապատրաստական աշխատանքներ) ելույթ ունեցավ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը: Իր խոսքում նա ընդգծեց, որ հաջորդ տարի մանկավարժի որակավորում ստանալու համար ուսանողները պետք է հանձնեն պետական քննություն, և կստեղծվի երկակի վիճակ. հանվում են պետական մասնագիտական քննությունները, որոնց փոխարինում է ոչ մասնագիտականը. արդյոք ուսանողները չեն՞ խուսափի դրանից՝ այլևս չդիմելով հավելյալ որակավորման մասնագիտացման, որը շատերի համար ունի կենսական նշանակություն:

Դեկանի վերոնշյալ մտահոգությանը համաձայնեցին գիտխորհրդի շատ անդամներ, և որոշվեց փնտրել փոխգիջումների հարմար տարբերակներ:

Գիտական խորհրդի նիստի **օրակարգի 4-րդ հարցի** (ընդհանուր լեզվաբանության ամբիոնի տարեկան հաշվետվությունը) առիթով հանդես եկավ ամբիոնի վարիչ դոց. Վ. Պետրոսյանը: Նա մասնավորապես ասաց հետևյալը.

- Հաշվետու՝ 2018-2019 ուստարում ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը դասավանդումը զուգակցել է ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքի հետ: Ամբիոնի գիտական հետաքրքրությունների շրջանակում են եղել լեզվաբանության տեսության, կառուցվածքային լեզվաբանության, համակարգչային լեզվաբանության, լեզվաբանական տիպաբանության, լեզվաբանական նշանագիտության, հայերենի պատմահամեմատական ուսումնասիրության, հ.-ե. լեզուների համեմատական քերականության, դասական լեզուների դասավանդման հետ կապված բազմաթիվ հիմնահարցեր:

Հաշվետու շրջանում ընդհանուր լեզվաբանության ամբիոնի դասախոսները գիտական տարբեր հանդեսներում հրատարակել են **7** (յոթ) հոդված (Վ. Պետրոսյան՝ 3, Լ. Հովսեփյան՝ 1, Ա. Աբրահամյան՝ 2, Ա. Հայրապետյան՝ 2, Է. Ասատրյան՝ 1):

Ամբիոնն ունի 2 հեռակա ասպիրանտ և 1 հայցորդ:

Ամբիոնի դասախոսները վարել են տարբեր դասընթացներ (լեզվաբանության հիմունքներ, ընդհանուր լեզվաբանություն, համեմատական քերականություն, հ.-ե. լեզուների համեմատական քերականություն, լատիներեն, հին հունարեն, լեզվաբանական տիպաբանություն, իմաստաբանական արդի ուսմունքներ և այլն) ԵՊՀ 5 ֆակուլտետների (հայ բանասիրության, եվրոպական լեզուների և հաղորդակցման, արևելագիտության, աստվածաբանության, կենսաբանության) և 1 կենտրոնի (ֆարմացիայի ինստիտուտ) բակալավրիատում և մագիստրատուրայում: Ըստ ուսանողական սոցիարցման տվյալների ընդհ. լեզվաբանության ամբիոնի դասախոսական կազմի միջին գնահատականը 4 միավորից բարձր է:

Ամբիոնի դոցենտ Ս. Ավետյանը այս ուստարվա I կիսամյակում ղեկավարել է մեկամսյա արտադրական պրակտիկա, որն անցկացվել է ՀՀ ԳԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտում: II կիսամյակում Երևան քաղաքի թիվ 109 դպրոցում կարդացել է 17 ժամ դասախոսություն՝ ժամանակակից հայերենի, հայոց լեզվի պատմության և հայերենի ցեղակցական կապերի ու համեմատական ուսումնասիրության առանձին հարցերի վերաբերյալ:

Ամբիոնն ունի 4 (չորս) հիմնական և 1 (մեկ) համատեղությամբ դասախոս:

Չնայած փոքրաթիվ կազմին՝ այսօր էլ ընդի. լեզվաբ. ամբիոնը շարունակում է ապրել լիարժեք գիտական կյանքով:

Գիտական խորհուրդը միաձայն դրական գնահատեց ընդհանուր լեզվաբանության ամբիոնի տարեկան աշխատանքները:

Օրակարգի 5-րդ հարցի (ընթացիկ քննությունների արդյունքների ամփոփում) առիթով զեկուցողները՝ դեկան պրոֆ. Ա. Ավագյանը և տեղակալ դոց. Ա. Սարգսյանը, տեղեկացրին, որ ընթացիկ քննություններն անցել բնականոն, սակայն նկատվել են արտագրության փորձեր: Նրանք ամբիոնի վարիչներից պահանջեցին ապահովել գրավոր աշխատանքների անցկացման անաչառությունը՝ քննական ընթացքին որպես հսկողներ ներգրավելով նաև ասպիրանտներին ու հայցորդներին:

Օրակարգի 6-րդ հարցի ընթացքում ֆակուլտետի դեկանը մանրամասն իրազեկեց ռեկտորատից ստացված գրությունների բովանդակությունը:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐՈՒՄ՝

Լ Ս Ե Ց Ի Ն – «Իրավաբանական գրագրության լեզուն» (համահեղ.՝ Յու. Ավետիսյան, Լ. Սարգսյան, Ա. Մկրտչյան) աշխատանքը տպագրության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, Ա. Աբաջյանը, դոց., դոց. Ա. Տեր-Մինասյանը, Բ. Ներսիսյանը և ուրիշներ:

Նշվեց, որ գիրքը մեզանում իրավական փաստաթղթերի լեզվին նվիրված առաջին աշխատանքներից է: Հեղինակները խիստ օգտակար գործ են կատարել՝ լեզվական քննության ոլորտի մեջ առնելով բավական բազմաբնույթ ու ծավալուն նյութ: Իրավաբանական տարբեր կարգի փաստաթղթերի լեզուն դիտարկված է մանրակրկիտ և խորաթափանց գննությամբ, նշվում են թերություններ ու սխալներ՝ հաճախ նույնիսկ առաջին հայացքից դժվար նկատելի, տրվում են ճիշտ տարբերակները, արվում են համոզիչ հիմնավորումներ, ներկայացվում են հանձնարարականներ, ցուցումներ:

Դիտարկումներն ու քննարկումները արվում են ըստ լեզվական մակարդակների: Գործնական արժեքի առումով կարևոր են հատկապես բառագործածության և քերականա-

կան ձևերի կիրառությանը վերաբերող հանձնարարականները: Գիրքը օգտակար կարող է լինել նախ՝ իրավական ոլորտի մասնագետներին, ապա և՝ հայոց լեզվի կիրառության հարցերով հետաքրքրվողներին:

Սույն աշխատանքի խմբագիրն է ք. գ. թ., դոցենտ Լևոն Ավետիսյանը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Հիմք ընդունելով նիստի մասնակիցների կարծիքները՝ «Իրավաբանական գրագրության լեզուն» (համահեղ.՝ Յու. Ավետիսյան, Լ. Մարգարյան, Ա. Մկրտչյան) աշխատանքը երաշխավորել տպագրության:

Լ Ս Ե Ց Ի Ն – Բելլա Սուրենի Խոջումյանի՝ „Соматические фразеологизмы (сопоставительное описание русских и армянских соматических фразеологизмов)” մենագրությունը տպագրության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, Ա. Աբաջյանը, Լ. Հովսեփյանը, դոց. Վ. Պետրոսյանը և ուրիշներ: Նշվեց, որ հեղինակը կատարել է բարեխիղճ աշխատանք: Ակնհայտ են նյութի խորքային իմացությունը և երկու լեզուների համարժեք իրողությունների զուգադրական քննության գիտական պատշաճ մակարդակը: Առկա են հրատարակության համար պահանջվող 2 (երկու) դրական կարծիքներ:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Բելլա Սուրենի Խոջումյանի՝ „Соматические фразеологизмы (сопоставительное описание русских и армянских соматических фразеологизмов)” մենագրությունը երաշխավորել տպագրության:

Լ Ս Ե Ց Ի Ն – Ընդհանուր լեզվաբանության ամբիոնի հայցորդ **Ասյա Վարազադատի Դարբինյանին** թեկնածուական ատենախոսության թեմա հաստատելու և գիտական ղեկավար նշանակելու հարցերը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, Ա. Աբաջյանը, Լ. Հովսեփյանը, դոց. Վ. Պետրոսյանը և ուրիշներ:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - 1. Հաստատել **Ասյա Վարազադատի Դարբինյանի** թեկնածուական ատենախոսության թեման՝ «Գրական արևելահայերենի և վրացերենի հոլովման համակարգերի զուգադրական–տիպաբանական քննություն»՝ Ժ. 02. 02 մասնագիտությամբ:

2. Գիտական ղեկավար հաստատել ամբիոնի վարիչ ք. գ. թ., դոցենտ **Վ. Զ. Պետրոսյանին**:

Վերջում նախագահողը շնորհակալություն հայտնեց բոլոր մասնակիցներին, ելույթ ունեցողներին, և գիտական խորհրդի նիստը համարվեց ավարտված:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ

ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ